# Ձայն




♦ ՀԱՄԱՐ 5 ♦ ՕԳՈՍՏՈՍ, 2004

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



- **«Ձայն» վերլուծական տեղեկատվական լրատու**
  նպատակ ունի բարձրացնել Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների շուրջ հասարակության իրազեկության աստիճանը,
- **լուսաբանել**
  իրականացվող հանրային քաղաքականությունները և հիմքեր ստեղծել դրանց հասարակական մոնիտորինգի և մասնակցության համար:
- **Ձայնը հրատարակվում է «Օքսֆամ»**
  բրիտանական կազմակերպության Հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի բյուջետային վերլուծությունների» ծրագրի շրջանակներում:
- **Ծրագիրը իրականացնում է Տնտեսական զարգացման հետազոտությունների կենտրոն**
  ոչ-առևտրային, ոչ-քաղաքական կազմակերպությունը:


## ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Փոխարժեք

Այս տարվա սկզբից նկատվող հայկական դրամի փոխարժեքի (կուրսի) արժեքավորումը հիմնական արժույթների նկատմամբ (Ամերիկյան դոլար, Եվրո) իր գագաթնակետին հասավ հուլիսի կեսերին: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքը մինչև 500 դրամ բարձրանալուց հետո մի փոքր նահանջեց և կայունացավ 515 դրամի սահմաններում, որը կազմում է 1998 թվականի մակարդակը:

### Հայաստանի տնտեսական վերջին զարգացումները

Հայաստանի տնտեսությունը, հակառակ «Լինսի» հիմնադրամի ավարտմամբ պայմանավորված վատատեսական սպասումների, շարունակում է արագորեն աճել, որի արդյունքում առաջին կիսամյակի տնտեսական աճը կազմել է մոտ 9 տոկոս: «Լինսի» հիմնադրամի բացը լրացվում է արագորեն աճող մասնավոր ներդրումների միջոցով, որը հիմնականում արտահայտվում է մայրաքաղաքում թափ հավաքող մասնավոր բնակարանաշինությունում: Զգալիորեն աճել է արտասահմանից ստացվող մասնավոր փոխանցումների ծավալը, որը նպաստել է հայաստանցիների սպառման ընդլայնմանը: Տեղի է ունեցել նաև արտահանման զգալի աճ: Ամենաուշագրավ զարգացումներից է հանդիսանում տոկոսադրույքների անկումը. օրինակ պետական արժեթղթերի շուկայում տոկոսադրույքները արդեն կազմում են տարեկան 5-7 տոկոս, որն աննախադեպ է անկախ Հայաստանի պատմության համար:

### Նավթի գինը

Համաշխարհային շուկայում նավթի գնի ընթացիկ աճը, որը սկսվել է դեռևս անցյալ տարվա սկզբից և

*Շար. հաջորդ էջում*

# Ինչո՞ւ է արժեքավորվում հայկական դրամը

Վերջին մի քանի ամիսներին մենք ականատես եղանք Հայաստանում փոխարժեքի տատանումների՝ հիմնականում դրամի արժեքավորման ուղղությամբ: Դրանք հասարակական լայն արձագանք ստացան՝ տեղի տալով զանազան մեկնաբանությունների:

### Պե՞տք է արդյոք թույլ տալ փոխարժեքի տատանումներ

Այս հարցի պատասխանը կախված է թե ինչ փոխարժեքի «ռեժիմ» է ընտրված տվյալ երկրում: Շատ երկրներում գործում է փոխարժեքի «ֆիքսված» ռեժիմ, երբ տեղական արժույթը կապվում է որևէ ուժեղ արժույթի, և պետությունը, հանձինս երկրի կենտրոնական բանկի (որը նման հարցերի պատասխանատուն է) ամեն գնով պահում է այդ մակարդակը: Բայց երկրների մեծ մասը վարում է ազատ «լողացող» փոխարժեքի քաղաքականություն, որը նշանակում է, որ տեղական արժույթը կարող է կամ արժեզրկվել կամ արժեքավորվել: Հայաստանը պատկանում է այս երկրորդ խմբին. հայկական դրամի փոխարժեքը չի կառավարվում պետության կողմից և հետևաբար ենթակա է տատանումների: Դեռևս 1996 թվականին Հայաստանը կատարել է իր ընտրությունը, և անցել է «լողացող» փոխարժեքի ռեժիմի:

### Արդյո՞ք հայկական դրամի փոխարժեքը «արհեստականորեն» է պահվել

Հաճախ կարելի է լսել, որ հայկական դրամի փոխարժեքը արհեստականորեն է պահվում, այլապես դրամը ի վիճակի չէր լինի կայուն լինելու: Սա սխալ տեսանկյուն է և պայմանավորված է Հայաստանում «սիրողական» տնտեսագիտության տարածվածությամբ, մասնավորապես այն թյուր կարծիքով, որ, որպես թույլ տնտեսությամբ երկիր Հայաստանը չի կարող կայուն արժույթ ունենալ: Իրականում, տնտեսության ուժեղ կամ թույլ, հարուստ կամ աղքատ լինելը կապ չունի փոխարժեքի կայունության հետ: Փոխարժեքի կայունությունը պայմանավորված է հիմնականում երկրի ֆինանսական քաղաքականության կայունության հետ: Աղքատ երկրները ևս կարող են ունենալ կայուն ֆինանսական համակարգ: Իսկ ֆինանսական համակարգի կայունության համար կարևոր է որպեսզի պետությունը զերծ մնա բյուջեի ծախսերը փակելու համար փող «տպելուց»: Հենց այդ քաղաքականությունն էլ տարվել է Հայաստանում 1997 թվականից սկսած, որի արդյունքում դրամի փոխարժեքը արհեստականորեն պահելու կարիք չի առաջացել:

### Մի փոքր հստակեցում. ինչո՞ւ «ինֆլյացիա» տերմինը չի կարելի կիրառել փոխարժեքի համար

Փոխարժեքի մասին խոսակցություններում հաճախ կարելի է լսել «ինֆլյացիա» տերմինը: Իրականում այս տերմինը փոխարժեքի տատանումներին չի վերաբերում, այլ վերաբերում է ապրանքների և ծառայությունների գների աճին: «Ինֆլյացիա» բառի հայկական համարժեքը սղաճն է: Իսկ փոխարժեքի տատանումների դեպքում օգտագործվում է փոխարժեքի «արժեզրկում» կամ «արժեքավորում» տերմինները: Այն ինչ տեղի ունեցավ վերջերս դա հայկական դրամի փոխարժեքի արժեքավորում էր, այսինքն մյուս արժույթների նկատմամբ հայկական դրամի ուժեղացում:

Ինֆլյացիա-սղաճը կարող է համընկնել փոխարժեքի արժեզրկման հետ, ինչպես Հայաստանում տեղի ունեցավ 1992-1994 թվականներին, երբ բյուջեի ծախսերը փակելու համար պետությունը գործի դրեց փող տպելու մեքենան, որի արդյունքում միաժամանակ գրանցվեց և՝ սղաճ և՝ փոխարժեքի արժեզրկում: Սակայն համեմատաբար կայուն ֆինանսական համակարգերի պայմաններում, ինչպիսին այսօրվա Հայաստանի ֆինանսական համակարգն է, պարտադիր չէ, որ գների աճն ու փոխարժեքի արժեզրկումը համընկնեն. կարող է լինել այնպես, որ գները որոշակիորեն աճեն, բայց փոխարժեքը, ընդհակառակը, արժեքավորվի, ինչպես այսօր տեղի է ունենում Հայաստանում:

### Փոխարժեք և գներ

Հայկական դրամի փոխարժեքը և գները իրար հետ որոշակիորեն կապված են, բայց այդ կապը կարող է այնքան էլ էական չլինել: Ինչքան մեր սպառած ապրանքների կառուցվածքում շատ լինեն ներմուծվող ապրանքները, այնքան փոխարժեքի տատանումները շատ կարտահայտվեն շուկայում ապրանքների գների վրա: Այսպես, հնարավոր է, որ փոխարժեքի թեկուզ 10 տոկոս արժեզրկումը չազդի շուկայում վաճառվող տեղական գյուղմթերքի վրա, այն դեպքում երբ այն անմիջապես կարտահայտվի ներմուծվող ապրանքների գների վրա: Նմանապես, վերջերս գրանցված փոխարժեքի արժեքավորումը չի կարող հանգեցնել գյուղմթերքների գների անկման, բայց որոշակի




*Շար. հաջորդ էջում*

*Սկիզբը՝ նախորդ էջում*

պայմանավորված էր Իրաքի պատերազմով, վերջին ամիսներին նոր թափ ստացավ: Մի պահ նույնիսկ նավթի գինը հասավ մեկ բարելի դիմաց 50 ԱՄՆ դոլարից, որը բոլոր ժամանակների «ռեկորդային» ցուցանիշն է հանդիսանում: Դա կապում են երկու գործոնի հետ՝ Իրաքի իրավիճակի անկայունության և Չինաստանի տնտեսության աճի հետ, որն արդեն սկսել է մեծ ծավալներով նավթ ներմուծել և վերջերս առաջ անցնելով Ճապոնիայից հանդիսանում է նավթի սպառման ծավալներով ԱՄՆ-ից հետո երկրորդ երկիրը:



Հայաստանը, որպես նավթամթերք ներմուծող երկիր պետք է որ անհանգստացած լինի նավթի գների բարձրացմամբ: Սակայն նավթի գների բարձրացումը նպաստում է Ռուսաստանի հարստացմանը, որից հնարավոր է, որ շահում են նաև այնտեղ աշխատող մեր հայրենակիցները և ավելի շատ գումար են փոխանցում Հայաստան, որն էլ փոխհատուցում է Հայաստանում բենզինի և այլ նավթամթերքների գների ներկայիս աճը:


**ՁԱՅՆ**

**Հիմնադիր և հրատարակիչ (լրատվական գործունեություն իրականացնող)**
«Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբենյանց 28-2,
Վկայական՝ 03 Ա 065178, տրված՝ 28/06/04

**Թողարկման պատասխանատու**
Ակսել Թևոսյան

**Ծրագրի ղեկավար**
Մուշեղ Թումասյան

**Լուսանկարները**
Ֆոտոլուր

**Տպաքանակը**
2200 օրինակ
Տարածվում է անվճար:

**Խմբագրության հասցե**
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 48
Հեռ./ֆաքս: (374 1) 234 420,
**www.edrc.am**
**dzayn@edrc.am**

**Ձայնը** հրատարակվում է **«Օքսֆամ»** ՄԲ աջակցությամբ:

Oxfam


*Սկիզբը՝ նախորդ էջում*

ժամանակ անց կհանգեցնի ներմուծվող ապրանքների գների անկման: Վերջին տարիներին Հայաստանում թուլանում է փոխարժեք-գներ կապը, քանի որ սպառողական ապրանքների կառուցվածքում մեծանում է տեղական ապրանքների և ծառայությունների կշիռը, որոնք հիմնականում անտարբեր են փոխարժեքի չափավոր տատանումների նկատմամբ:

## Ինչպե՞ս է ձևավորվում հայկական դրամի փոխարժեքը

Ինչպես և այլ շուկաներում, արժութային շուկայում ևս գինը որոշվում է առաջարկ-պահանջարկ հարաբերակցությամբ: Իսկ փոխարժեքը հայկական դրամի շուկայական գինն է՝ արտահայտված մյուս արժույթներով՝ հիմնականում ԱՄՆ դոլարով: Եթե երկիր մտնում է ավելի շատ տարադրամ և դա ամբողջությամբ դուրս չի գալիս, ապա երկրում առաջանում է տարադրամի ավելցուկ, որն էժանացնում է այդ տարադրամը թանկացնում է հայկական դրամը: Վերջերս արձանագրված հայկական դրամի ուժեղացումը պայմանավորված է նրանով, որ Հայաստանում շատացել էր այն դոլարի քանակը, որն ուզում էր շուկայում փոխանակվել դրամի հետ, իսկ քանի որ դրամի քանակը չէր ավելանում, ապա դրամը սկսեց թանկանալ, իսկ տարադրամը, համապատասխանորեն, էժանանալ:

Հայաստան տարադրամ է մտնում հայկական ապրանքների արտահանման, մեր հարազատների դրամական փոխանցումների, օտարերկրյա ներդրումների, բյուջեի վարկային միջոցների և դրամաշնորհների և զբոսաշրջիկներ գալու ճանապարհով: Իսկ Հայաստանից տարադրամ է դուրս գալիս ապրանքների ներմուծման, մեր արտաքին պարտքի գծով վճարումներ կատարելու, արտագաղթողների կողմից իրենց խնայողությունները դուրս տանելու և արտասահմանում հանգստացողների կողմից գումարներ դուրս տանելու ճանապարհով: Փոխարժեքի մակարդակը պայմանավորված է նրանով, թե ո՞րն է ավելի մեծ՝ տարադրամի ներհոսքը թե՞ արտահոսքը:

Ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն դեպքում պետությունը պարտավոր կլիներ փոխարժեքը անփոփոխ պահելու համար կամ գնել ավելցուկ տարադրամը (եթե ներհոսքը գերազանցում է արտահոսքին), կամ իր պահուստներից լրացներ շուկայում պակասող տարադրամը (եթե արտահոսքը գերազանցում է ներհոսքին): Իսկ քանի որ Հայաստանը իրականացնում է լողացող փոխարժեքի քաղաքականություն, ապա նա կարող է ոչ մի բան էլ չձեռնարկել և թույլատրել փոխարժեքի փոփոխություն:

Իհարկե դա չի նշանակում, որ Հայաստանի կենտրոնական բանկն այս տարիներին չի միջամտել արտարժութային շուկային: Վերջին 7 տարիների ընթացքում երկրում գրեթե յուրաքանչյուր տարի առաջացել է տարադրամի ավելցուկ: Կենտրոնական բանկը այդ տարիների ընթացքում այդ ավելցուկից գնել և կուտակել է մոտ 300 մլն. դոլար, որի դիմաց տնտեսություն մտցված դրամը գնացել է «սպասարկելու» մեր աճող տնտեսական գործառնությունները, քանի որ այդ նույն ժամանակահատվածում արձանագրվել է տնտեսական աճ: Այսինքն կենտրոնական բանկի մասնակցությունը արտարժութային շուկայում պայմանավորված է եղել տնտեսություն դրամ մտցնելու անհրաժեշտությամբ, որի համար մեր կենտրոնական բանկն օգտագործել է ամեն տարի Հայաստանում ձևավորվող դոլարի ավելցուկը և գնել է դրա մի մասը, փոխարենը տնտեսություն մտցնելով հայկական դրամ: Բայց կենտրոնական բանկը կարող է և չգնել այդ ավելցուկ տարադրամը, եթե գտնի, որ տնտեսություն դրամ մտցնելու կարիք այլևս չկա:

## Ինչպես ուժեղացավ հայկական դրամը

Հայկական դրամի ուժեղացումը սկսվեց դեռևս այս տարվա մարտ-ապրիլ ամիսներին: Այդ միտումը արագացավ հատկապես հուլիսին և ավարտվեց այն բանով, որ հուլիսի 15-ից 20-ը արտարժույթի շուկան չդիմացավ և ենթարկվեց կտրուկ տատանումների: Չնայած տարածված այն կարծիքներին, որ սպեկուլյացիաներն են տատանում փոխարժեքը, ակնհայտ է, որ փոխարժեքի արժեքավորումը տեղի էր ունենում դեպի Հայաստան տարադրամի հոսքերի ավելացման պայմաններում: Եթե սպեկուլյացիաներ եղել են, ապա դա ուղղվել է արժեքավորվող դրամից որոշակի օգուտների քաղելուն, այլ ոչ թե արժեքավորում ստեղծելուն: Սկսած դեռևս 2001 թվականից տարեցտարի մեծանում են դեպի Հայաստան արտարժույթի հոսքերը: Դրան ամենաշատը նպաստում է արտասահմանից մասնավոր փոխանցումների և հայկական ապրանքների արտահանման աճը: 2002-2003 թվականների շատ կարևոր գործոն էր նաև «Լինսի» հիմնադրամը: Եթե նախորդ տարիներին կենտրոնական բանկը արտարժույթի հոսքի ավելցուկի մի մասը շուկայում գնում էր և փոխարենը մեզ դրամ էր տալիս, ապա այս տարի կենտրոնական բանկը որոշեց զերծ մնալ տարադրամ գնելուց:

**Ինչու՞ կենտրոնական բանկը դադարեց գնել տարադրամի «ավելցուկը». Կենտրոնական բանկի պատճառաբանությունը:**

Կենտրոնական բանկի մտավախությունը այն է, որ վերջին տարիների կայուն ներհոսքի և տնտեսական աճի պայմաններում երկրում սկսել է նկատվել «սղաճային» կամ «ինֆլյացիոն» երևույթներ, այսինքն սպառողական գները բարձրանում են ավելի արագ քան, ասենք, մի երկու տարի առաջ: Հայտնի է, որ արտարժույթի ներհոսքը հանգեցնում է ապրանքների գների աճի, որը պայմանավորված է ապրանքների նկատմամբ պահանջարկի աճով: Բոլոր երկրները, որտեղ տեղի են ունեցել արտարժույթի մեծ հոսքեր, ստիպված են եղել համակերպվել գների բարձրացման հետ: Բայց արտարժույթի ներհոսքն ունի մեկ առանձնահատկություն. այդ ներհոսքից բնակչությունն անհավասարաչափ է օգտվում: Պատկերացրեք մի վիճակ, երբ ձեր բարեկամի կողմից ձեզ փոխանցվող գումարներն աճում են և դուք պատրաստ եք ավելի շատ ապրանքներ ձեռք բերել, իսկ եթե պետք լինի, նաև ավելի բարձր գին վճարել շուկայում վաճառվող լավ ապրանքների համար: Դրանով շահում եք դուք, շահում են այդ ապրանք վաճառողները, մեծանում է տնտեսական ակտիվությունը: Բայց այն մարդկանց կյանքում, որոնք ոչ նախկինում և ոչ էլ հիմա չունեին նման եկամուտներ, փոխվում է միայն մի բան, այն էլ դեպի վատը՝ ձեր հարստանալու և ավելի շատ ապրանքներ սպառելու արդյունքում բարձրանում են գները: Մի այլ օրինակ. զբոսաշրջիկների աճող հոսքը օգուտներ է բերում հյուրանոցներին, ճանապարհորդական գրասենյակներին, բայց այս ոլորտների հետ կապ չունեցող մարդիկ իրենց վրա զգում են զբոսաշրջիկների կողմից սպառվող հայկական ապրանքների գների բարձրացման բացասական ազդեցությունը:

Թույլ տալով փոխարժեքի արժեքավորում՝ կենտրոնական բանկը փոքրացնում է արտարժութային եկամուտներ ունեցող մարդկանց ծախսելու հնարավորությունը: Այսպես եթե, ձեր բարեկամից ստացված գումարը անցյալ տարի կազմում էր 100 ԱՄՆ դոլար կամ 57000 դոլար, իսկ հիմա այն ավելացել է և հասել 110 դոլարի: Բայց քանի որ կենտրոնական բանկն այլևս չի գնում ձեր դոլարը, ապա այն կկազմի ոչ թե 62700 դրամ, այլ ընդամենը 56000 դրամ: Դրա արդյունքում դուք ավելի քիչ ապրանքներ կգնեք, որը հնարավորություն կտա կենտրոնական բանկին ապահովելու սղաճի նախատեսված մակարդակը, այն է ընդամենը 3 տոկոս: Իսկ եթե արտարժույթի ներհոսքի արդյունքում առաջացած տարադրամի ավելցուկն ամբողջովին գնվեր կենտրոնական բանկի կողմից, սղաճը կարող էր կազմել նույնիսկ 10 տոկոս:

## Հակառակ կարծիքներ

Լրիվ ընդունելով ցածր սղաճ ապահովելու անհրաժեշտությունը շատ տնտեսագետներ գտնում են, որ Կենտրոնական բանկը պետք է միջամտեր շուկային և գներ որոշակի քանակությամբ տարադրամ, որը կթեթևացներ դրամի դեֆիցիտը: Այդ տնտեսագետները պնդում են, որ չնայած փոխարժեքի արժեքավորումը նվազեցնում է սղաճի մակարդակը և բարձրացնում է դրամի նկատմամբ վստահությունը, միևնույն ժամանակ «թանկ» դրամը նպաստում է տեղական արտադրության անկմանը, քանի որ տեղական ապրանքները դառնում են անմրցունակ: Այսպես, ենթադրենք շուկայում կա երկու տեսակի հյութ՝ տեղական և ներմուծվող, և երկուսի գինն էլ անցյալ տարի կազմել է 570 դրամ կամ 1 դոլար: Փոխարժեքի արժեքավորումը ներմուծողներին հնարավորություն է տալիս իջեցնել ներմուծված հյութի գինը մինչև 520 դրամ, այն դեպքում, երբ տեղական հյութի գինը մնում է անփոփոխ և տեղական արտադրողը հայտնվում է բավականին տհաճ իրավիճակում: Նույն իրավիճակը ստեղծվում է Հայաստանից արտահանվող ապրանքների համար: Այսինքն, հնարավոր է, որ սղաճի բարձր մակարդակ թույլ չտալու համար կենտրոնական բանկը ստեղծել է մի իրավիճակ, որը կտանի տեղական արտադրության դիրքերի զիջման և Հայաստանում աշխատատեղերի կրճատման:

Կենտրոնական բանկի քաղաքականության դեմ է խոսում նաև այն, որ եթե նույնիսկ սղաճի մակարդակը հասնի մինչև 7-8 տոկոսի, դա էական բացասական ազդեցություն չի կարող թողնել: Օրինակ են բերվում որոշ անցումային երկրներ, որոնք չնայած արդեն անդամակցել են Եվրոմիությանը, բայց դեռևս ունեն 5-7 տոկոս սղաճ, որը պայմանավորված է կապիտալ մեծ ներհոսքերով: Այդ երկրները գտել են, որ դեռ ժամանակը չէ խստացնելու սղաճի վերահսկողությունը և ավելի բարձր տնտեսական աճի համար դեռ անհրաժեշտ է թույլատրել մի փոքր ավելի սղաճ: Հաջորդ փաստարկը այն է, որ տնտեսական նման բարձր աճի և կապիտալի ներհոսքի պայմաններում առնվազն սխալ է եղել 3 տոկոս սղաճի նպատակ սահմանելը, և որ պիտի այդ սղաճի նպատակը սահմանվեր առնվազն 5 տոկոսի սահմաններում: Այստեղ պետք է նշել, որ անցյալ տարի արձանագրվել է 8.6 տոկոս սղաճ և այս տարի չէր կարելի սահմանել ընդամենը 3 տոկոս սղաճ:

Կան նաև կարծիքներ, որ ամեն գնով, տվյալ դեպքում փոխարժեքի աննախադեպ արժեքավորում թույլ տալու ճանապարհով ցածր սղաճ ապահովելու կենտրոնական բանկի ցանկությունը պայմանավորված է նաև կենտրոնական բանկի նախագահի պաշտոնավարության ժամկետի ավարտվելով: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, պաշտոնավարման վերջին տարում կենտրոնական բանկի նախագահները առավել են խստացնում սղաճի նկատմամբ վերահսկողությունը, որը մեծացնում է երկրի ղեկավարության կողմից ևս մեկ ժամկետով կենտրոնական բանկի նախագահ նշանակվելու հավանականությունը:

## Ամփոփում

Ցանկացած դեպքում ակնհայտ է մի բան, որ Հայաստանում պակասում են նման լրջագույն երևույթների վերաբերյալ անկախ և օբյեկտիվ քննարկումները: Ներկայումս իշխանությունների և ընդդիմության կարծիք արտահայտող վերլուծաբանները խոսում են զուտ քաղաքական դիրքերից, որի արդյունքում երկիրը կորցնում է ճշմարտության բացահայտման և քաղաքականության անհրաժեշտ ճշգրտման հնարավորությունները: